ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Գնահատման համակարգի բարեփոխման հիմքերը կրտսեր դպրոցում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Առաքելյան Զինա Առաքելի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հալիձորի միջնակարգ դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Գնահատման համակարգը կրտսեր դպրոցում: Սովորողների գնահատում: Համակարգային գնահատում……..……..……5
3. Գնահատման սկզբունքները……..9
4. Գնահատման համակարգի հայեցակարգային նոր մոտեցումները…….12
5. Եզրակացություններ……..17
6. Օգտագործած գրականության ցանկ……..……18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումն ուսուցման գործընթացում վերահսկողությունն իրականացնող կարևոր բաղադրիչ է, որն ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը և հանդես է գալիս որպես ուսումնադաստիարակչական գործընթացի շտկման և կարգավորման միջոց: Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Գնահատվում են պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացման, գործնականում դրանք կիրառելու կարողությունների ու հմտությունների, մտավոր զարգացման մակարդակները: Գնահատականն ավելի կոնկրետ է, բխում է ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորությունից, դրանց կիրառման արդյունքից: Գնահատման հիմնական գործառույթը ուսուցման արդյունքների որակի որոշումն է: Տարրական դպրոցի զարգացման արդի փուլում գերակա նպատակ է սովորողի անձի զարգացումը: Գնահատման օբյեկտիվությունը, նպատակայնությունը մեծապես պայմանավորված է գնահատման արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության և այլ սկզբունքներով:

Սովորողների առաջընթացը բացահայտող ստուգման ձևեր են թվանշանային (միավորային) և ուսուցանող գնահատման տարբերակները:

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են: Ուսուցանող գնահատման նպատակն է ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը, և դրանց օգնությամբ բարելավել ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև սովորողին ըմբռնելի դարձնել ուսման նպատակները:

Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի

վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկմամբ բացահայտվում են դրանց ձևավորվածության մակարդակները և ուսուցման գործընթացում է առկա թերությունները, որոնք նրանք ձեռք են բերում: ուսումնական աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկումը, գիտելիքների գնահատումը համարվում է ուսուցման գործընթացի ական բաղադրիչը, որոնցով և որ բնութագրվում՝ դպրոցի գործունեության արդյունավետությունը:

**Հետևաբար, հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ** գնահատումը ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակի բացահայտում, այն ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորում, ինքնավերահսկաման, ինքնագնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացում: Սովորողների ուսումնական հաջողությունները պայմանավորված են նաև աշակերտի ուսումնական դրդապատճառներով, ինքնուրույնությամբ, ակտիվությամբ:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է** ուսումնասիրել, վերլուծել տարրական դպրոցի գնահատման համակարգը, բացահայտել գնահատմանն առաջարկվող նոր մոդելներ ու ժամանակակից ձևեր:

**Աշխատանքի կատարման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.**

1. ուսումնասիրել տարրական դասարաններում կիրառվող գնահատման համակարգը,
2. ուսումնասիրել տարրական դասարաններում գնահատման առաջարկվող նոր մոդելներն ու ժամանակակից ձևերը,
3. ներկայացնել առարկայական գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման որակը, դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին,
4. վերլուծել կրտսեր դպրոցականների գնահատման մեթոդներն և տեսակները:

Հետազոտության **տեսական նշանակությունը** կայանում է տարրական դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկողության, գիտելիքների ստուգման և գնահատման գործառույթների տեսակների, ձևերի և մեթոդների մասին տեսական և մեթոդաբանական մշակման մեջ մեջ՝ կրթական բարեփոխումների համատեքստում: **Գործնական նշանակությունը** պայմանավորված է կրտսեր դպրոցականների գիտելիքների, հմտությունների, արժեքների, վերաբերմունքի բաղադրիչների ձևավորման, վերահսկման՝ ստուգման և գնահատման ձևերին ու տեսակներին վերաբերող հիմնական տեսությունների կիրառմամբ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

### Սովորողների գնահատում: Համակարգային գնահատում:

Գնահատումը սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակի վերաբերյալ տեղեկույթ ձեռք բերելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական արդյունքները վերահսկելու գործընթացն է՝ նրանց ձեռքբերումների, ուսումնական նյութի յուրացման ու տիրապետման աստիճանի, անձնային որակների ստուգման և ուսման որակի վերահսկման նպատակով: Առաջնորդվելով կրթական բարեփոխումների արդի պահանջներով՝ սովորողների ձեռքբերումների գնահատումը պետք է կիրառել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման և վերահսկման միջոց, այլ նաև այն դարձնել ուսումնադաստիարակչական գործընթացի անբաժանելի մաս: Այս դեպքում տարրական դպրոցի ուսուցիչը հաշվի է առնում աշակերտների ուսումնական գործունեության ամբողջականությունը (հին դասի հարցման և նոր դասի բացատրման գործընթացները), ուսումնական նյութը պատմելը, հարցերին պատասխանելը, ակտիվությունը, ինքնուրույնությունը, վարքը և այլն. Գնահատականը գնահատումի հետևանքն է՝ շարունակական բաղադրիչը: Որպես գնահատական կարող է հանդես գալ ուսուցչի դիմախաղը, ժեստերը, խոսքը և այլն: Թվանշանը գնահատականի հստակ արտահայտությունն է, օրինակ՝ 7, 8:

Արդի դպրոցում գործում է գնահատման <<տաս>> միավորային համակարգ։ Սակայն հաճախ, բացի թվանշանից, ուսուցիչը կիրառում է խոսքային գնահատումները՝<<շա՛տ լավ է>>, <<ապրե՛ս>>, <<կարող էիր ավելի լավ պատասխանել>>, <<այսօր լավ չես աշխատում>> և այլն։ Գնահատման միջոց է նաև օրագրում աշակերտի ստացած թվանշանի, հաճախ նաև՝ ծնողների ուղղված երկտողը։

Գնահատման ընթացքում առանձնացվում են հետևյալ բնութագրիչները.

- առարկայական գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման որակը, դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին,
- կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության ձևավորվածության աստիճանը (նպատակադրումը, պլանավորման, աշխատանքի կատարման, արդյունքների գնահատման կարողությունը),
- մտավոր գործունեության զարգացվածության աստիճանը (դիտելու, վերլուծելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու, ստեղծագործելու կարողությունը),ճանաչողական ակտիվության, հետաքրքրությունների զարգացման մակարդակը։[1]

Մի շարք գիտնականներ գտնում են, որ որպես գնահատման չափանիշ կարող է հանդես գալ ուսումնառության մակարդակը՝

- **առաջին մակարդակ՝ տարբերում՝** հասկացությունների ձևավորում. գնահատվում է բավարար,
- **երկրորդ մակարդակ՝վերարտադրում,** երբ սովորողը կարող է սահմանել, բերել օրինակներ, գնահատվում է լավ,
- **երրորդ մակարդակ՝ հասկացում.** Սովորողներից պահանջվում է պատճառահետևանքային կապերի բացահայտում. Գնահատվում է լավ կամ գերազանց՝ կախված առաջադրանքի բարդությունից,

1 Ասատրյան Զ. Ա, Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, 2017, էջ 96:

- **չորրորդ մակարդակ՝ կարողությունների և հմտությունների ձևավորվածություն.** սովորողները կարողանում են կատարել առաջադրանքը և գիտելիքները կիրառել գործնականում,
- **հինգերորդ մակարդակ՝ փոխանցում.** ոչ ստանդարտ իրավիճակներում յուրացված գիտելիքների կիրառման կարողության զարգացում:[2]

Տարրական դպրոցում ուսուցման արդյունքների վերահսկողությունն ու ստուգումը կատարում են հետևյալ գործառույթները.

1. **Սոցիալական գործառույթը** դրսևորվում է կրթական չափորոշիչներում: Այս պարագայում վերահսկողության համակարգը պետության և շահառուների /*ծնողներ, սովորողներ, ուսուցիչներ և այլն*/ տվյալ հասարակության մեջ կրթական հիմնախնդիրներին իրազեկվածության ապահովման գործիքն է:
2. **Կրթական գործառույթը** որոշվում է ակնկալվող և իրական արդյունքների համեմատումը: Ուսուցիչը կարող է գնահատել, վերլուծել կիրառվող մեթոդական համալիրի արդյունավետությունը, ծրագրի բովանդակային ուղղությունների համալրման, բեռնաթափման անհրաժեշտությունը:
3. **Դաստիարակչական գործառույթը** դրսևորվում է ինքնավերահսկման պատրաստակամությամբ, որը կարոր գործոն է ցածր ինքնագնահատականի և սթրեսների հաղթահարման համար:
4. **Հուզական գործառույթ.** Այս գործընթացի իրականացման համար ուսուցիչը պետք է ի զորու լինի հասկանալ սովորողի՝ գնահատման հետ կապված հույզերը, ապրումները, խրախուսի, հավատ ներշնչի, որ աշխատանքի շնորհիվ կարելի էհասնել հաջողության և բարելավել ուսումնական ցածր արդյունքները, շտկել առկա թերությունները:
5. **Տեղեկատվական գործառույթը.** Ուսումնական արդյունքների պարբերաբար վերլուծությունը, տեղեկատվության մշակումն ու նպատակային կիրառումը նախանշում են գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիները:

2 Թունյան Ջ. Ե. Երիցյան Լ. Մ. «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն» Երևան 2013, էջ 52:

6. **Կառավարման գործառույթը** կարող է սովորողների ինքնավերահսկողության կարողությունների զարգացման, սեփական գործունեության համարժեք գնահատման համար:

Սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ անհրաժեշտ է հետևել հետևյալ պահանջների կատարմանը՝

- կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների բազմակողմանի և համակարգված վերահսկողություն:
- կրտսեր դպրոցականների անհատական առանձնահատկությունների հաշվառում:
- վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների հարաբերակցում:
- վերահսկողության ընթացքում բարյացակամ մթնոլորտի ապահովում:
- վերահսկողության՝ ծրագրին համապատասխան ստուգման իրականացում:

Գնահատման առաջարկվող մոդելը տարրական դպրոցում նախատեսված է մայրենիից, մաթեմատիկայից, օտար լեզուներից, կերպարվեստից, տեխնոլոգիայից համեմատաբար ավարտուն թեմաների յուրացումն արժևորող գնահատման համար: Այդ մեթոդի իրականացման ժամանակ կիրառվում են գնահատման գործընթացի մեջ սովորողներին ներգրավելու մանկավարժական միջոցներ և երկխոսություններ:

Սովորողի գնահատումը կարող է ծառայել մի շարք տարբեր նպատակների.

- ստանալ սովորողների կարողունակությունների զարգացման առաջընթացի նկարագրություն և պատկերացում կազմել դրա մասին,
- որոշել՝ արդյոք սովորողները գրանցում են ակնկալվող շարժընթացը՝ նախատեսվող կարողունակությունների ձեռքբերման իմաստով,
- պարզել սովորողների ընթացիկ առաջընթացը և ապագայի ուսումնառության նպատակները, որպեսզի հաջորդիվ նախատեսվող ուսուցումը հնարավոր լինի կազմակերպել այնպես, որ սովորողները հնարավորություն ստանան հասնելու այդ նպատակներին,
- պարզել՝ ինչ կոնկրետ դժվարությունների կարող են հանդիպել սովորողները, որպեսզի հաջորդիվ ուսուցումը հնարավոր լինի կազմակերպել այնպես, որ այն օգնի սովորողներին հաղթահարել այդ դժվարությունները,

- գնահատել ուսուցիչների փորձառությունները՝ հետադարձ կապով կարծիք հայտնելու համար, թե իրենց կողմից տարվող ուսուցումն ինչպես կարելի է կարգավորել՝ ավելի արդյունավետ դարձնելով,
- գնահատել կոնկրետ միջամտության կամ ուսումնամեթոդական ծրագրի արդյունավետությունը։

Գնահատման գործընթացում պետք է պահպանվեն հետևյալ ընդհանուր կանոնները.

- սովորողներին չպետք է շարունակական սթրեսի ենթարկել՝ անընդհատ գնահատվելու միջոցով.
- սովորողներն ունեն մասնավոր կյանքի և գաղտնիության իրավունք, հատկապես իրենց արժեքների և մոտեցումների առնչությամբ.
- գնահատման արդյունքները սովորողներին հաղորդելիս նրբանկատություն է պահանջվում.
- գնահատման արդյունքում՝ հետադարձ կապով սովորողներին կարծիք հայտնելիս պետք է կենտրոնանալ ոչ թե բացասական, այլ դրական արդյունքների, ոչ թե սովորողի թերությունների, այլ հիմնականում նրա ձեռքբերումների վրա.
- կարող են լինել դեպքեր և հարցեր, երբ գնահատում չպետք է կատարվի, քանի որ այդ հարցերը կամ թեմաները չափազանց նուրբ են տվյալ սովորողների համար.
- նաև հարկ է հատուկ նախազգուշական միջոցներ ձեռնարկել այն դեպքերում, երբ վերջնարդյունքների գնահատումը օգտագործվելու են որոշելու՝ տվյալ սովորողի կրթության հաջորդ մակարդակում ուսումը շարունակելու հարցը։[3]

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Որպեսզի ուսմանը տրված գնահատականներն ընդունելի լինեն սովորողների համար, իսկ երիտասարդ սովորողների պարագայում՝ նրանց ծնողների կամ խնամակալների համար, կարևոր է, որ դրանք համապատասխանեն մի շարք

3 . Ասատրյան Զ. Ա, Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, 2017, էջ 99:

չափանիշների։ Այդ չափանիշներից են վավերությունը, հուսալիությունը, հավասարությունը, թափանցիկությունը և, գործնականությունը, հարգալից վերաբերմունքը։

**Վավերություն**։ Վավերություն նշանակում է, որ գնահատումը պետք է ճշգրտությամբ նկարագրի և/կամ չափի սովորողների կողմից նախատեսվող կրթական վերջնարդյունքների տիրապետման կամ ձեռքբերման աստիճանը, այլ ոչ՝ որևէ այլ չնախատեսված վերջնարդյունքներինը կամ կողմնակի գործոններինը։ Վավեր է այն գնահատումը, որը գնահատում է այն, ինչի համար նախատեսված է վերջինս[4]։

**Հուսալիություն**։ Հուսալիությունը նշանակում է, որ գնահատումը պետք է տա արդյունքներ, որոնք միասնական/հաջորդական և կայուն են։ Հուսալի գնահատումն այն է, որը կախված է իր վերջնարդյունքներից, իսկ այդ վերջնարդյունքները պետք է կրկնօրինակելի լինեն, եթե գնահատման նույն ընթացակարգը կրկին կիրառվի նույն սովորողի նկատմամբ և ուրիշ գնահատողի կողմից։ Տարբեր գործոններ կան, որոնք գնահատումն անհուսալի են դարձնում։ Օրինակ՝ հնարավոր է գնահատողը հոգնած լինի կամ հնարավոր է, որ գնահատվող կրթական վերջնարդյունքների ճշգրիտ իմաստը հստակ չպատկերացնի։

**Հավասարություն**։ Հավասարություն նշանակում է, որ գնահատականը պետք է լինի արդար և չպետք է առավելություն տա կամ անբարենպաստ վիճակ ստեղծի որևէ խմբի կամ անհատի համար։

**Թափանցիկություն**։ Թափանցիկություն նշանակում է, որ սովորողները պետք է գնահատման վերաբերյալ նախապես ստանան անթաքույց, լիարժեք և հստակ տեղեկատվություն։ Գնահատման թափանցիկ գործընթացն այն գործընթացն է, երբ սովորողները նախապես տեղեկացվում են գնահատման նպատակի, գնահատվող

---

[4] Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ, https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758/30/12/2017:

կրթական վերջնարդյունքների մասին, ինչպես նաև[5] կիրառվելիք գնահատման ընթացակարգի և գնահատման չափանիշների մասին:

**Իրագործելիություն**: Իրագործելիության սկզբունքը նշանակում է, որ կիրառվող գնահատման մեթոդը պետք է լինի իրատեսական՝ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսները, ժամանակն ու գործնական սահմանափակումները:

**Հարգալից վերաբերմունք**: Հարգալից վերաբերմունքի հիման վրա կառուցված գնահատումը կարող է մոտիվացնել, որ գնահատվողներն ընդունեն և ըմբռնեն գնահատումն ու դրա նպատակները:

Գնահատման առաջարկվող մոդելը տարրական դպրոցում նախատեսված է մայրենիից, մաթեմատիկայից, օտար լեզուներից, կերպարվեստից, տեխնոլոգիայից համեմատաբար ավարտուն թեմաների յուրացումն արժևորող գնահատման համար: Այդ մեթոդի իրականացման ժամանակ կիրառվում են գնահատման գործընթացի մեջ սովորողներին ներգրավելու մանկավարժական միջոցներ և երկխոսություններ:

Մեթոդը պայմանականորեն կոչվում է «Արևիկ». Արևի ճառագայթները աշակերտի զարգացող հատկանիշներն են, իսկ կենտրոնում՝ նրա «Ես»-ը: Որպես զարգացնող հատկանիշներ գործածվում են սովորողների առաջադիմության գնահատման բազմագործոնային համակարգում արդեն իսկ նշված որակներն արտացոլող քարտեր, աշխատանքի կատարման արագություն (կապույտ), ինքնուրույնություն (մոխրագույն), ակտիվություն (կանաչ), պատասխանատվություն (վարդագույն) և այլն: Ուսուցիչը պետք է ունենա տասը գունավոր քարտ, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված է աշակերտի որևէ հատկանիշ: Տարբեր առարկաների համար այն պահանջում է որոշակի ստեղծագործական մոտեցում, կարելի է միայն փոփոխել քարտերի ձևը, որպեսզի աշակերտի համար լինի ավելի հետաքրքիր և գրավիչ: Դրան կարող են մասնակցել նաև սովորողները: Օրինակ՝ մայրենիի դասին, երբ աշակերտներն ուսումնասիրում են «Մայրենի 2» դասագրքի «Իմ հա՛յ լեզու, իմ ու՛ժն ես դու» թեմատիկ խմբի նյութերը, քարտերը կարող են տառերի տեսք ունենալ: Աշնանը վերաբերող թեմաների համար՝ մրգերի, ձմռանը՝ փաթիլների, գարնանը՝ ծաղիկների և այլն: Քարտերը կարելի է գունավորել կամ կտրատել կերպարվեստի տեխնոլոգիայի ժամերին:

5 Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ. Մ., «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն» Երևան 2013, էջ 55:

Եթե աշակերտը դրսևորում է անձնային այս կամ այն որակը, ապա ուսուցիչը նրան տալիս է համապատասխան գույնով քարտ։ Դասընթացի որոշակի փուլի ավարտին երեխան պետք[6] է կտրի տվյալ գույնի քարտերի քանակին համապատասխան երկարության ճառագայթ և գնահատման իր անհատական պաստառի վրա փակցնի «Արևիկ»։

Պաստառը A3 չափի թղթի վրա պատկերված արև է, որի կենտրոնում երեխան կարող է փակցնել իր լուսանկարը։ Տվյալ մեթոդը աշակերտներին հնարավորություն է ընձեռում պատկերավոր դարձնելու նրա բարոյահոգեբանական Ես-ի բարդ համակարգը։ Աշակերտի այդ հատկանիշներից մի քանիսը կարող են առավել զարգացած լինել, մյուսները՝ պակաս, այնուհանդերձ, նրանք հանգում են այն եզրակացության, որ անձը որոշակի հատկանիշների ներդաշնակ ամբողջություն է, և պետք է համարժեքորեն գնահատվեն բոլորը։

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ։ Դրա համակարգվածությունից, հրապարակայնությունից և օբյեկտիվությունից են կախված ուսուցման որակը և դաստիարակչական շատ խնդիրների լուծման արդյունավետությունը։

Հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մյուս մոտեցումը կապված է գնահատման դաստիարակչական գործառույթի դիտարկման հետ՝ հաշվի առնելով աշակերտի վրա ուսուցչի գնահատման ազդեցության հոգեբանական կողմը։

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում՝ կապված ուսուցման գործընթացում ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ, երևան են եկել հիմնախնդրի ուսումնասիրման նոր

6 Ասատրյան Զ. Ա., Տարրական կրթության մանկավարժություն, Երևան 2017, էջ 111։

տեսանկյուններ։ Ուսուցման գործընթացում ուսման որակի վերահսկողությունը կառավարման անհրաժեշտ գործառույթ է, որը տեղեկատվություն է տալիս այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման և կարգավորման վերաբերյալ։ Դա բարձրացնում է հսկողության որակը, նրա հուսալիությունը և չափանիշների հիմնավորվածությունը։

Ելնելով այս մոտեցումներից հիմնավորվում է, որ դպրոցականների ուսուցման որակի վերահսկողությունը՝ գիտելիքների հաշվառումը, ստուգումն ու գնահատումը կախված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից։Այսինքն՝ առկա են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեթոդաբանական մոտեցումներ, սակայն դեռևս ոչ լիարժեք են լուսաբանված կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման ձևերը և մեթոդները, և գնահատման՝ որպես վերահսկողության կարևորագույն գործառույթի ազդեցությունը աշակերտների ինքնագնահատման, ինքնաստուգման, ընդունակությունների զարգացման վրա։ Դիտարկված չէ նաև ուսուցման գործընթացում վերահսկողության նպատակների և ընթացակարգի համահարաբերակցության հիմնախնդիրը։

Այսինքն՝ ելնելով կրթության նոր հարացույցից և գերակայություններից՝ նորովի մշակման կարիք են զգում ըստ տարիքային առանձնահատկությունների՝ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները, մեթոդներն ու ձևերը, ըստ ցուցանիշների ստուգողական հարցերի կանխորոշիչ նշանակությունը որոշելու եղանակները, ստուգման անհատական, խմբային և համակցված ձևերը։

Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, գիտելիքների ստուգման և գնահատման տեսակների և ձևերի կիրառման արդյունավետությունը ապահովվում է ուսուցման գործընթացում անձնակողմնորոշվածության, անձի ազատության, հարկադրանքի բացառման և հումանիստական փոխհարաբերությունների հաստատման սկզբունքների կիրառմամբ։

Գնահատման միավորային համակարգի դեպքում վերահսկվում և գնահատվում էր գիտելիքը, նրա մտապահման աստիճանը, ուշադրությունից դուրս են մնում կարողությունների և հմտությունների որակի վերահսկման հարցերը։

Մանկավարժական գնահատումը պետք է նպաստի աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանք գիտելիքների և դաստիարակվածության մակարդակի բարձրացմանը, ուսման դրդապատճառների ձևավորմանը։ Իսկ եթե խոսքը գնահատականների միավորային համակարգը գիտելիքների գնահատման այլ համակարգով փոխարինելու մասին է, ապա սկզբունքորեն նման անցումը հնարավոր է հատկապես տարրական դասարաններում, սակայն դա կպահանջի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացի վերակառուցում, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հոգեբանության փոփոխում, կազմակերպական մանկավարժական բարեփոխումներ։

Սովորողների ուսումնական գործունեության արդյունքների վերահսկողությունը պետք է՝

- կրի համակարգված բնույթ,
- ընդգրկի ուսումնական ծրագրի հիմնական բաժինները,
- ունենա անհատական բնույթը յուրաքանչյուր աշակերտի աշխատանքի նկատմամբ,
- աչքի ընկնի անցկացման ձևերի բազմազանությամբ,
- լինի օբյեկտիվ և թափանցիկ,
- ապահովի բոլոր ուսուցիչների միասնական մոտեցումը։

Վերահսկողությունն իրականացնում է կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթներ, սակայն կարևորագույն գործառույթը ախտորոշիչն է, երբ ուսուցիչը բացահայտում սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման աստիճանը, դրանց ելակետային մակարդակը՝ նրանց նոր գիտելիքների յուրացմանը պատրաստելու համար։

Վերահսկողությունը սերտորեն կապված է գնահատականի հետ։ Գնահատականը ցույց է տալիս, թե յուրացման արդյունքները որքանով են համապատասխանում ուսումնական իրադրության պահանջներին Տարրական դասարաններում գնահատման

հիմնական դերը պատկանում է ուսուցչին, սակայն սովորողների ինքնավերահսկողության կարողության ձևավորման զուգընթաց գնահատման գործառույթն անցնում է նաև նրանց:

Դիտարկելով սովորողների գիտելիքների գնահատման ներկա 10-միավորային համակարգի թերությունները՝ հիմնավորվել է այն կատարելագործելու անհրաժեշտությունը:

Առաջին հերթին գնահատման նույն համակարգը չի կարելի կիրառել և տարրական, և հիմնական և ավագ դպրոցում՝ հաշվի առնելով սո վորողների տարիքային ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկությունները և առողջական խնդիրները:

Ուսուցչի աշխատանքը տարրական դպրոցում պետք է առաջին հերթին հենվի կրթական վերջնարդյունքների կանխատեսման վրա: Այսինքն ուսուցիչը, նախապես ծրագրավորելով իր աշխատանքը ի՞նչ է տալիս և դրա արդյունքում ինչ պետք է ստանա, պետք է հենվի հետադարձ գործունեության վրա առաջին հերթին գնահատելով իր գործունեության արդյունքը:

Վերջնարդյունքի կանխատեսումը կբացառի սովորողների գիտելիքների, կարողությունների մեխանիկական, չհիմնավորված գնահատումը առաջին պլան մղելով ուսուցիչ-աշակերտ արդյունավետ համագործակցությունը:

Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի գնահատման որակը առաջին հերթին որոշվում է պետական չափորոշչին նրա համապատասխանությամբ:

Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային, կազմակերպական արդյունքներն ի հայտ բերելու և վերահսկելու գործընթացն է, իսկ գնահատման նպատակը գիտելիքների, կարողությունների և հմտությունների, արժեհամակարգի տիրապետման և անձնային առաջընթացի որակի վերահսկումն է

Կրտսեր դպրոցականի գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկողության ձևերը, տեսակներն ու մեթոդները պայմանավորված են նրանց

տարիքային և հոգեբանական առանձնահատկու թյուններով և ուսուցման նպատակների որոշմամբ:

Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ ստուգման և գնահատման 10 միավորային համակարգի որոշակի անհամապատասխանությունը նրանց տարիքային, հոգեբանական և ուսումնական գործունեության առանձնահատկություններին, քանի որ այն ուղղված է ոչ միայն գիտելիքների յուրացվածության որոշակի մակարդակի, այլև կարողությունների և հմտությունների ձևավորվածության աստիճանի նպատակաուղղված բացահայտմանը:

Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման գործընթացը պետք է կառուցվի մարդասիրական և անձնակողմնորոշված մոտեցումների հիման վրա: Այդ տեսանկյունից նպատակահարմար է գնահատման 10 միավորային համակարգը կիրառել միայն 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակում: Իսկ առաջինից չորրորդ դասարաններում կիրառել գնահատման գործառույթ կատարող տարբեր բնութագրումներ:

Հետազոտությամբ ձևակերպված կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության չափանիշներն ու մակարդակները՝ գիտելիքների ծավալը, խորությունը, հաստատունությունը, վերարտադրելու տրամաբանությունն ու լեզուն, գիտելիքները մտավոր աշխատանքի մեջ և պրակտիկայում օգտագործելու կարողություններն ու հմտությունները կնպաստեն ուսման որակի վերահսկման ու գնահատման ժամանակակից համակարգի կատարելագործմանը:

Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների և ձևերի կիրառումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում կբարձրացնի սովորողների ուսումնական, ճանաչողական ակտիվությունը՝ կարգավորելով աշակերտների ինքնագնահատականի և ուսուցչի կողմից տրված գնահատականի համահարաբերակցությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ կարող ենք փաստել, որ կրթության որակի բարելավման նպատակով, հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող նոր պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բարեփոխված մոտեցումներն ու մեթոդները, սովորողների գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1. սովորողի ուսումնական գործունեության եւ առաջադիմության ընթացքի բացահայտումը, նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրումը, հաշվառումը եւ վերլուծությունը,
2. հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների իրականացման բացահայտումը, սովորողի կողմից դրանց յուրացման և տիրապետման աստիճանի շարունակական, փուլային ստուգումն ու գնահատումը:
3. Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության եւ թափանցիկության սկզբունքները:

Հանրակրթական դպրոցների սովորողների գնահատման նպատակներից եւ սկզբունքներից բխում են հետևյալ առանցքային մոտեցումները:

- գնահատման տարբեր ձեւերի եւ տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
- գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- ուսուցանող (ձևավորող) գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ եւ բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,

- նպաստել սովորողի անձնային լավ որակների ձեւավորմանն ու վարքագծի բացահայտմանը, խթանել նրա ինքնաճանաչման, ինքնազարգացման եւ ինքնագնահատման կարողությունների զարգացումը:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ասատրյան Զ. Ա., Տարրական կրթության մանկավարժություն, Երևան 2017:
2. Ավետիսյան Զ., Գրիգորյան Կ. և ուրիշներ, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:
3. Ավետիսյան Զ., Կարապետյան Ա., Ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, 2008:
4. Թունյան Զ. Ե. Երիցյան Լ. Մ. «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն» Երևան 2013:
5. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ, https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758/30/12/2017:
6. Միքայելյան Օ., Միքայելյան Ս., Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2009: